«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Դաստիարակ՝ Մարինե Բաբայան

Մանկապարտեզ՝ «Պառավաքարի Կարեն Մարգարյանի անվան» ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1. ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ.....4

1.2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ.....7

ԴԻՏԱՐԿՈՒՄ.....10

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....12

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրական դաստիարակությունը առանցքային դեր է խաղում երեխայի անհատականության զարգացման և նրա քաղաքացիական ինքնության ձևավորման գործում: Այս գործընթացում առանձնահատուկ կարևորություն ունեն նախադպրոցական ուսումնական հաստատությունները, քանի որ դրանք եզակի հնարավորություններ են ընձեռում երեխաների մոտ հայրենիքի նկատմամբ խորը կապվածության ձևավորման համար: Ահա մեր ուսումնասիրած թեմայի արդիականությունը: Հայրենիքի ճանաչողությունը երեխաների մեջ բարձրացնում է նաև հայրենասիրություն, պատվախնդրություն, կապվածություն և նվիրում հանուն հայրենիքի:

Շատ կարևոր են հայրենաճանաչողության մասին զրույցները հենց նախադպրոցական տարիքից, քանի որ հայրենասիրությունը պիտի ձևավորվի երեխայի գիտակցական հիշողության ձևավորման փուլից, այն է՝ 4-6 տարեկանից:

Մեր հետազոտության նպատակն է նախադպրոցական սաների մտածողության մեջ զարգացնել այնպիսի ազգային-հայրենասիրական արժեքներ, որոնք կձևավորեն պատասխանատու և հայրենասեր քաղաքացիներ:

Մեր նպատակին հասնելու համար առաջադրել ենք մի քանի խնդիրներ, որոնք են՝

- Ուսումնասիրել հայրենաճանաչողության մասին գրականությունը,
- Կարևորել հայրենաճանաչողության ձևավորման առանձնահատկությունները, այդ շրջանակում կարևորել մեր հայրենիքի խորհրդանիշների իմացությունը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ հիմնական գլխից, մեր կողմից կատարված դիտարկումից, եզրակացությունից, ապա կցել ենք ուսումնասիրած գրականության ցանկը: Աշխատանքը բաղկացած է համակարգչային 13 էջից:

ԳԼՈՒԽ 1.

1.1. ՄԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1.2. ՄԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայրենիքը սիրում ես ոչ թե նրա համար,
որ մեծ է այլ նրա համար,որ քոնն է:
Մենեկա

Հայաստանի Հանրապետությունը այսօր ապրում է իր պատմության ծանր փուլերից ևս մեկը, հատկապես 2020 թվականից հետո, հետևաբար վերջերս վերաիմաստավորվել է հայրենասիրական դաստիարակության էությունը և բովանդակությունը: Շատ կարևոր է, որ մեր օրերում հասարակության կրթական գործունեության բովանդակությունը կենտրոնանա հայրենաճանաչողության և քաղաքացիական դաստիարակության վրա: Ըստ այդմ էլ առաջանում է նախադպրոցական տարիքի երեխաների մեջ հայրենասիրություն սերմանելու գործընթացի ակտիվացման հրատապ անհրաժեշտությունը: Դպրոցական տարիքում շատ ուսուցիչներ վստահեցնում են, որ եթե հայրենասիրական դաստիարակությամբ չզբաղվեն նախադպրոցական տարիքում, ապա ապագայում այդ աշխատանքը կարող է անօգուտ լինել, և արդյունավետ հայրենասիրական դաստիարակության հնարավորությունները կկորչեն: Ի վերջո, նախադպրոցական տարիքում դրվում են անհատի ձևավորման հիմքերը: Մարդու կյանքի այս շրջանն է առավել բարենպաստ բնավորության այնպիսի գծերի զարգացման համար, որոնք հիմք են դնում բարոյական և հայրենաճանաչողությանը, որոնք կօգնեն երեխային ապագայում դառնալ արժանապատիվ մարդ և քաղաքացի:

Հայրենասիրությունը միայն գեղեցիկ խոսքեր չեն, այլ առաջին հերթին հայրենիքին, երկրին, ժողովրդին ծառայելու խնդիր է: Նախադպրոցական տարիքի երեխայի մեջ հայրենասիրության զգացում սերմանելու գործընթացը բարդ է և երկար, դաստիարակից պահանջում է առաջին հերթին անձնական մեծ համոզմունք և, իհարկե, ոգեշնչում: Մանկավարժական արվեստի ամենակարևոր գործոնը ուսուցչի և

սովորողի հուզական միասնությունն է: Հայրենաճանաչողության վերաբերյալ իմացության արդյունավետության բարձրացմանը նպաստող երկու գործոն կա.

- Տեխնոլոգիական՝ կապված այս աշխատանքի կազմակերպման համար նյութական ռեսուրսների բարձրորակ ընտրության հետ, որոնք կարող են ներառել դիտակտիկ ու զննական շատ միջոցներ:
- Անձնական, որը կապված է ուսուցչի անհատականության հետ (քաղաքացիական և կենցաղային դիրքի, հայրենիքի, հայրենի շրջանի, աշակերտների հանդեպ սերը և այլն): Նման ուսուցիչը ոչ միայն խրախուսում է հայրենասիրական զգացմունքները, այլև դնում է երեխայի ողջ ապագա կյանքի հոգևոր հիմքերը, որոնք հիմք են հանդիսանում երկրի իսկական քաղաքացու ձևավորման համար:

Ուսուցչի գեղեցիկ խոսքերը հայրենաճանաչողության մասին ոչ մի տեղ չեն տանի, ոչ մի խոսք չի օգնի, եթե նա ինքը անտարբեր լինի այս հարցում: Ուսուցչի անկեղծ հավատքը, գրավելով իր աշակերտներին, շատ ավելի մեծ ազդեցություն է ունենում և հուզական արձագանք է գտնում երեխաների սրտերում, քան գեղեցիկ խոսքերը: Ուսուցչի հոգու հարստությունը և նրա ստեղծագործական ներուժը, անկասկած, առաջատար դեր են խաղում հայրենասիրական դաստիարակության նպատակների և խնդիրների իրականացման գործում: Նախադպրոցական կրթության մեջ հայրենասիրական դաստիարակության նպատակն է երեխայի մեջ զարգացնել բարի գործեր և արարքներ անելու անհրաժեշտությունը, շրջակա միջավայրին պատկանելու զգացումը և այնպիսի հատկությունների զարգացումը, ինչպիսիք են կարեկցանքը, հնարամտությունը և հետաքրքրասիրությունը: Հայրենասիրական դաստիարակության խնդիրները հանգում են հետևյալին.

- ձևավորել հայրենաճանաչողության և հայրենասիրության սկզբնական զգացմունքները որպես համամարդկային արժեք (սեր ձեր ընտանիքի, մանկապարտեզի, հայրենի հողի, երկրի և այլոց նկատմամբ),
- նպաստել երեխայի իրազեկմանը՝ որպես իր երկրի քաղաքացի՝ հարգող և հպարտ իր հայրենիքով,

- երեխաներին ծանոթացնել մշակութային ժառանգությանը, տոներին, ավանդույթներին, ժողովրդական արվեստին, բանավոր ժողովրդական արվեստին, երաժշտական բանահյուսությանը, ժողովրդական խաղերին,
- ծանոթություն ընտանիքի հետ (պատմություն, ընտանիքի անդամներ, հարազատներ, տոհմ, ընտանեկան ավանդույթներ), մանկապարտեզ (մեծահասակներ, խաղեր, խաղալիքներ, ավանդույթներ), քաղաքի, գյուղի (պատմություն, զինանշան, ավանդույթներ, նշանավոր քաղաքացիներ, անցյալի բնակիչներ և ներկա, տեսարժան վայրեր),
- Տարվա տարբեր եղանակներին օբյեկտների վիճակի նպատակային դիտարկումների իրականացում, բնության մեջ սեզոնային գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպում (ծաղիկներ, բանջարեղեն ցանել, թփեր, ծառեր տնկել և այլն).
- Երեխաների ստեղծագործական, արդյունավետ, խաղային գործունեության կազմակերպում, որում երեխան տարվա տարբեր եղանակներին ցուցաբերում է համակրանք և հոգատարություն մարդկանց, բույսերի և կենդանիների նկատմամբ՝ կապված նոր կենսապայմաններին հարմարվելու հետ:

Հայրենասիրական շարժանկարները, մուլտֆիլմերը, հեքիաթները, բանաստեղծությունները հայրենաճանաչողության կարևոր բաղադրիչ են, թվում է, թե երեխաները շատ փոքր են հայրենիք տերմինը ամբողջությամբ ընկալելու համար, սակայն պետք է հիշել մեր պապերից եկած ասույթը.«Կաթիլ-կաթիլ ծով կդառնա»: Հայրենաճանաչողության ձևավորման և հայրենասիրական դաստիարակությանը նպաստելու համար նախադպրոցական հաստատություններում դրվում է հիմքը՝ երեխաներին ծանոթացնելով հայրենիքը խորհրդանշող այնպիսի երևույթների, ինչպիսիք են մեր հայրենիքի խորհրդանիշները: Դրանց հետ ծանոթացումը և ուսուցումը և գիտելիքների ամրակայման գործընթացը կարելի է իրականացնել առանձին պարապմունքների, ուսուցողական շրջայց-էքսկուրսիաների, ինչպես մոտակա, այնպես էլ հեռավոր պատմամշակութային վայրեր, միջոցառումների և այլ հնարների օգնությամբ: Այս ամենը արդյունավետ է լինում, երբ պահպավում են նախադպրոցական հաստատություն-ընտանիք, դաստիարակ-ծնող-սան երկկողմ և եռակողմ հոգատար հարաբերությունները: Հայրենիքի մասին առաջին գաղափարը

սաները պետք է ստանան՝ իմանալով մեր դրոշի գույները և դրանց նշանակությունը, պետական զինանշանը, օրհներգը, նույնիսկ կարելի է ամեն օր առավոտյան հանդիպումը սկսել հենց օրհներգով:

1.3. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

«Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունից ու վերլուծությունից հետո իրականացրել ենք աշխատանքի հետազոտական բաղադրիչը, որը իրենից ներկայացնում է 2 դասաժամ պարապմունք, որի հիման վրա կազմել ենք պարապմունքի պլան՝ «Ես ճանաչում եմ քեզ, Հայաստա՛ն» խորագրով:

Հետազոտության ժամանակ աշխատանքը իրականցվել է համալիր ծրագրով՝ զրույց և համապատասխան զննական ու դիդակտիկ նյութերով հագեցած:

Պարապմունքները ուսումնասիրվել և արձանագրվել են հաստատության մեթոդիստի կողմից, կատարվել են դիտարկման շրջանակում առաջարկություններ, որոնք կներկայացվեն հետայսու:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Միջավայր-խմբասենյակ

Խումբ- միջին

Պարապմունքի տեսակը-զրույց

Ժամաքանակը-2

Թեմա-Ես ճանաչում եմ իմ հայրենիքը

Նպատակը- Ծանոթացնել և իրազեկել հայրենիքի քարտեզի, ՀՀ դրոշի, զինանշանի, օրհներգի մասին՝ անպայման ցուցադրելով դրանք:

Խնդիրները- զարգացնել երեխաների կապակցված խոսքը, հաղորդակցումը, մտքերի փոխանակումը, խթանել ազատ խոսքի հնարավորությունը, արտահայտել շատ մտքեր

Ուսումնական նյութեր- դրոշ, զինանշան, մանր և խոշոր կառուցողականներ, գլուխկոտրուկներ, նկարներ տեսարժան վայրերով, քարտեզ, նվագարկիչ, համակարգիչ

Մեթոդներ-Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, կիսվի՛ր, զրույց

Ընթացքը

Խթանում- Առավոտյան, հենց երեխաները հավաքվում են, տրվում է հրահանգ կանգնելու և ուշադիր լսելու մեր օրհներգը՝ «Մեր հայրենիք»: Սաներին անպայման բացատրել, որ օրհներգը լսելիս կամ երգելիս ոտքի ենք կանգնում և աջ ձեռքը սեղմում սրտին: Դա նշանակում է, որ սիրում ու հպարտանում ես քո հայրենիքով

Հարց- Իսկ նկատե՞լ եք, թե միջավայրում երբ են ոտքի կանգնում:

Լսել կարծիքներ, խրախուսել նրանց:

Իմաստի ընկալում- Երեխաները նստում են կիսաշրջանաձև, իսկ նրանց դիմաց՝ գրատախտակին կամ այլ հարմար տեղ տեղադրում ենք մեր երկրի քարտեզը, դրոշը /ցանկալի է ոչ թե նկարը, այլ կտորե տեսակը/, զինանշանը:

Ներկայացնում ենք մեր քարտեզը:

Հարց-Ո՞ր երկրում ենք ապրում:

Սովորեցնել մեր երկրի անունը:

Հարց-ինչի՞ եք նմանեցնում մեր քարտեզը:

Պատասխաններ լսելուց հետո քարտեզի մոտ դնել մի նկար ՝ ջրի կաթիլի տեսքով, նշել, որ այն հաճախ նմանեցրել են ջրի կաթիլի:

Ներկայացնել զինանշանը, պատմել՝ ինչ կենդանիներ կան նրա վրա նկարված:

Հարց- Կողքի նստածի հետ զույգ կազմել, ընտրել՝ ով է առյուծը, ով՝ արծիվը:

Ֆիզկուլտ-դադար- Խաղում են «Թզուկներ-հսկաներ» խաղը՝ ըստ արծիվներ-առյուծներ անունների:

Լսել Համո Սահյանի «Անունդ տալիս» բանաստեղծությունից մեկ տուն:

Հարց- Ինչի՞ մասին է այս բանաստեղծությունը:

Լսել կարծիքներ:

Ցույց տալ դրոշը, երեխաներին հարցնել գույները նշել՝ որ գույնը ինչ է խորհրդանշում, երեխաներին դադարի ժամանակ տանել դուրս և ցույց տալ դրսում ծածանվող եռագույնը:

Կշռադատում

Ապա կազմել խմբեր՝ 5-7 հոգանոց, սեղանին խառը դնել տարբեր նկարներ, որոնց մեջ անպայման լինեն եռագույնը, քարտեզը, զինանշանը, դրոշը, առաջարկել գտնել, մեր խորհրդանիշները, որ խումբը արագ գտնի, կստանան կրծքանշաններ մեր դրոշի պատկերով, իսկ մնացածին կտրվեն այլ կրծքանշաններ:

Վերջնարդյունքներ-ճանաչել մեր հայրենիքի խորհրդանիշները:

Կապը ՆԿՊՉ/ Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ/-ով սահմանված վերջնարդյունքների հետ-

- ա . երեխան ընկալում և վերարտադրում է լսած փոքրիկ պատմությունները
- գ. քերականորեն ճիշտ է կազմում նախադասությունները՝ կիրառելով կապական միջոցներ,
- ը. հաղորդակցման ընթացքում ոչ միայն արտահայտում է սեփական վերաբերմունքը որևէ երևույթի նկատմամբ, այլև դրսևորում է դիմացինին լսելու կարողություն,

Կարողունակություններ՝

- Ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,
- Լեզվական և հաղորդակցական կարողունակություն

Հաջորդ պարապմունքին ցանկալի է այցելել բնակավայրում գտնվող որևէ պատմամշակութային վայր կամ մոտակա հուշարձան՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու, որը ևս կնպաստի հայրենասիրական դաստիարակությանը:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Դիտարկումը կատարվել և արձանագրվել է հաստատության մեթոդիստի կողմից: Ստորև կներկայացնենք թեմայի շրջանակում կատարված դիտարկման արդյունքները.

- Այս երկու պարապմունքները կարողացան որոշակի իմացություն տալ մեր հայրենիքի և նրա խորհրդանիշների մասին,
- Թեման հետաքրքիր էր, երեխաների ակտիվությունը՝ վարակիչ, սաների պատասխանները հաճախ մտածելու տեղ էին տալիս անգամ մեծահասակներին,
- Պարապմունքին ներառված զննական-դիդակտիկ նյութերը համապատասխանում էին թեմային,
- Դաստիարակի կողմից կատարված աշխատանքը, կարծում ենք, խմբի սաների համար կլինի հայրենաճանաչման համար առաջին ու անմոռանալի քայլը:
- Դաստիարակը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակին, որի շնորհիվ սաների մոտ արմատավորվեց հայրենաճանաչողության, քաղաքացիական-հայրենասիրական հմտությունների զարգացումը:
- Երեխաները իրենց զգում էին արժևորված ու կարևորված, քանի որ բոլորը մասնակցում էին, բոլորին լսում էին, խրախուսում:

Դիտարկումների արդյունքում իր եզրակցությունները կատարել է նաև հաստատության տնօրենը, որոնք կներկայացնենք ստորև.

-Ապրելով տեխնիկապես զարգացած 21-րդ դարում՝ անհրաժեշտ է, որ վաղ տարիքից երեխան ծանոթանա գեղագիտական և հայրենաճանաչողական դաստիարակության հիմունքներին, իսկ դրա համար նմանատիպ դաս-պարապմունքները հետաքրքիր են ու մոտիվացնող: Ակամայից մեծերն էլ են դառնում պարապմունքի մի մասնիկը՝ նորովի ընկալելով արդեն իսկ իմացածը: Այս պարապմունքը հայրենաճանաչողության գաղափարով հագեցած ստացված ու ոգեշնչող է: Կարծում եմ կիրառված մեթոդների միջոցով որոշակիորեն գիտելիքներ փոխանցվեց երեխաներին՝ հայրենաճանաչողության բոլոր զգայարանների միջոցով՝ հոգի, սիրտ, միտք եռամիասնության մշտական կիրառմամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենաճանաչման՝ մեր կողմից կատարված առաջին քայլերը արմատավորելու համար առաջարկում ենք.

- Ավանդույթ դարձնել մեր օրհներգի ունկնդրումը նախադպրոցական հաստատությունների բոլոր խմբերում,
- Առաջարկել ծնողներին իրենց երեխաների հետ դիտել հայրենաճանաչման վերաբերյալ հետաքրքիր տեսանյութեր, մուլտֆիլմեր, ֆիլմեր, դրանց անվանումները կամ կայքէջերի հղումները կարող են նախապես տրվել ծնողներին դաստիարակների կողմից,
- Ստեղծել հայրենաճանաչման սեփական անկյունը խմբում՝ կազմված խորհրդանիշների նկարներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

՝Այսպիսով՝ ուսումնասիրելով «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեման՝ եկանք այն եզրակացության, որ նախադպրոցական հաստատություններում սաները ստանում են հայրենասիրական դաստիրակաության առաջին դասերը, որոնք կարող են անմոռաց պահեր պարգևել նրանց պարզ ու մաքուր մտածողությանը ու ընդմիշտ դրոշմվել նրանց հիշողության մեջ:

Հայրենաճանաչողության թեմայով անցկացված պարապմունքները նպաստում են ինքնության և ազգային մտածելակերպի զարգացմանը, բացահայտվում են երեխաների ներաշխարհը և ոգին, զրույցի միջոցով սերմանվում են նաև ընկերասիրություն, հայրենասիրություն և հանդուրժողականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դմիտրիևա Ե. Ա., Հայրենասիրական դաստիարակություն նախադպրոցական ուսումնական հաստատությունում,Մ., 1991, էջ 15-17:
2. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, Ե.,2012, էջ 66 :
3. Չիբուխչյան Ս., Սարգսյան Լ., Մայրենի լեզվի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում, Ե., 2011, էջ 75:
4. Վազարովա Օ. Վ., Նախադպրոցականների բարոյական և հայրենասիրական դաստիարակությունը, Ս-Պ., 1991, էջ 75: